

յատկութիւնը, սրա մէջ ինկած մետաղ-
ները, քարերը և խեցիները երեք չորս
օրից ստանում են սպիտակ արծաթի կամ
կարմիր պղնձի գոյն: Նայելի երկրում
Արծն անուանով ջերմուկներ և աղբիւրներ
շատ կան, ոչ միայն Արարատեան դաշ-
տում, այլ և Բարձր-Հայքում, Տուրու-
բերանում, Վասպուրականում, Աղձնի-
քում: Արծնել, նշանակում է մի առար-
կայի վրայ եմայ ամրացնել, էմալով ծած-
կել:

Սումմեր Ակկադները մեր երկիրը ան-
ւանում էին Ակկադ (Բարձունքի Աշխարհ),
քանի որ մեր երկիրը 3-4000 մեղր
նրանցից բարձր է: «Ակ» վանկով բազ-
մաթիւ լեռներ են անւանւում Գետերի
աշխարհում, ինչպէս Ակ-մանգանը, Ակ-
դեւեր, Ակ-բաբա, Ակ-լագան, Ակ-վա-
րան, և այլն: Երեւում է որ քարային
շրջանում, Ակկադների զարգացման դա-
րում Ակ-մանգան սարը որոշ դիրք է ու-
նեցել, բայց անուշադրութեան է մատնւել
Միջին դարերում:

Արծնու ձորում և շրջապատում, ինչ-
պէս երեւում է պեղումներից, մշակոյթը
սկսւել է նախաքարային շրջանում, ինչ-
պէս աչկատարեան ամրոցներով, նոյնպէս
օբսիդիանի գործիքներով: Նախաքա-
րային շրջանում օգտւել են ինչպէս բնա-
կան անձաններից, նոյնպէս յատկապէս
պեղած արհեստական քարայրներից: Քա-
րայրների մուտքի ճակատներին նկատելի
են բնականից իրար սեղմած այնպիսի
գեղաձեւ թաղարտեայ կամարներ, որոնք
մշակոյթի զարգացման դարերում որպէս
օրինակ ծառայել են վարպետ ճարտարա-
պետներին: Այս անձաններում այնպիսի
գմբէթներ են բնականից կազմուել հինգ
և վեց անկիւնաւոր երկար թաղարտի քա-
րերից, որոնց ձեւերից ճարտարապետները
օգտւել են կամարակապ գմբէթներ կա-
ռուցել ոչ միայն Նայելի երկրում, այլ
և շրջակայ երկիրներում, մինչեւ Ռէյ,
Եկրատան, Նինուէ և Ուրգուր:

Արծնու կոշորդի, ձախակողմը Հրազ-
դանի բարձրութեան վրայ մի արտում

գտայ օբսիդից շինուած կացին, փետատ,
դանակ, ածելի, սղոց, բերիչ, բերթիչ,
ասեղ, նիզակի և տէգի ծայրեր և բազ-
մաթիւ ջարդուած և մանրած օբսիդի գոր-
ծիքներ: Ենթադրելի է որ այդտեղ եղել
է օբսիդի արհեստանոց, որտեղից խու-
զարկու մասնագէտները բազմաթիւ գոր-
ծիքներ են գտել ու տարել: Երեւում է,
որ Նուրնուս գիւղի շրջապատի օբսիդի
հանքից օգտւել են, ջերմուկի ճանապար-
հին արհեստանոց հիմնել, պատրաստած
գործիքները փոխանակել են ուխտաւոր-
ների բերած պանիրի, իւղի, գառի, իւղի
և պաստառների հետ:

Մշակոյթի զարգացման հետ զարգա-
ցել են և քարայրները: Արծնի գիւղի
տափարակի ափին, ձորի բերանին, հե-
ղեղատի հոսանքի մօտ հիմնել են Չիթ-
ղաց, որ 20 մեղր երկարութիւն, 13 մ.
լայնութիւն և 7 մեղր բարձրութիւն ունի:
Չիթղացի դինգը 2 մեղր տրամագիծ ունի,
60 հարկերով զամեղր թանձրութիւն և այն-
պիսի ողորկւածք, որ կարող է ներկայիս
բարտաշ յղկողների նախանձը զրգոել: Կան
անձաններ, որոնք ներքին երկու - երեք
բաժանումներ ունին, կարող են 2-300
ոչխար տեղաւորել: Այս անձանները Անիի
Ծաղկաձորի 5000 մեծ և փոքր քարայր-
ների կատարելագործման չեն հասել, բայց
զարգացման նախնական շրջանից անցել
են:

Թէ ջերմուկի շրջապատից և թէ շրջա-
կայքից բազմաթիւ խեցեղէն (ceramique)
անօթներ են դուրս եկել, որոնք իրենց
արեւստով ցոյց են տալիս, թէ բրուտի
արեւստը, մանաւանդ կաւի ընտրութիւնը,
թրծումը և ձեւաւորումը ունեցել է իր
զարգացումը, ճաշակը: Սեւ, սպիտակ,
նարնջագոյն, դեղին, գորշ և տորոնի խե-
ցեղէն անօթները պարզ վկայում են, որ
արեւստաւորի միտքը անվերջ գործել է և
զարգացրել նորանոր ձեւեր, նոյնիսկ քան-
դակներ և նկարներ:

Ահա երկրորդ տարին է որ ջերմուկից
երեք հազարամեղր ցած, Հրազդանի երկու
կողքերին փապուղի են փորել, կապանքներ

հիմնել սրբատաշ քարերով և կրաղիւսով,
որպէս զի Հրազդանից ջուր բարձրացնեն
և ջրանցքով ջուրը հասցնեն ղարը (ան-
ջորդի տափաստանները) ոռոգելու: Այս
ջրերը ոչ միայն պիտի կենդանացնեն
Պողնիսի, Առնշի, Քանաքեռի, Աւանի ղը-
ռերը, պիտի բարձրացնեն բերքի որակն
ու քանակը, այլ ջուրը պիտի հասցնեն
մինչեւ Վաղարշապատի, Փարաքարի հան-
գեքը, առապարները, և տասնեակ հազար
հեկտար ղարը պիտի կենդանանան եւ
հարկը հազարաւոր հողագործների կե-
րակրեն: Ոչ միայն մշակը թանկագին
բերքերի արտադրութեամբ պիտի բար-
ձրացնէ իր հասոյթը, այլ պիտի զարգա-
ցնէ երկրի ճարտարարեւստը:

Մշակոյթը ինչպէս առաջացել է նա-
խապատմական շրջանում, նոյնպէս Միջ-
նադարում Արծնին իր շրջակայքով բազ-
մամարդ է եղել և ետ չէ մնացել ար-

ւեստներով: 1828 թուին Պասկեւիչի հետ
զաղթած Ուրմիի գիւղերից Ասսուրիների
աւանը մեծ քաղաք է եղել, ձոխ և բազ-
մամարդ, որը վկայում են նրա միջի կի-
սականգուն հինգ տաճարները և սրանց
շրջապատի գերեզմանաքարերը իրենց
սքանչելի քանդակներով և հայերէն ար-
ձանագրութիւններով, որոնք հիմնւել են
Ե - Զ դարերում: Իսկ Է դարում կանգ է
առել մշակոյթը և կեանքը քարացել:
Այսօր բանւոր երիտասարդութիւնը մեծ
թափով կերպարանափոխեց քարացած և
ստրկական կեանքը, հիմնարկներ կառուց,
մեքենաներ սարքեց եւ մշակոյթը շատ
բարձրացրեց, և ակնբախ ամէն տեղ ցոյց
է գալիս, թէ աշխատաւորների կառավա-
րութիւնը սահմանել, շինել և ծրագրել
է հսկայական ընթացք մը Հայաստանի
համար:

ԱՏՐՊԵՏ

1931¹

ԳՐԱԿԱՆ ԲԵՐՓԵՐԸ

Մտքի մշակներու անթոշակ վաստա-
կաւորները կը թուեն: Հեղինակներ պար-
տական, կամաւորաբար լռեցին: Պարսա-
մեան երկու զրազէտ եղբայրներ Կեանք և
Արուստ Տարեգրքի փեթակը մտքի մեղրով
լեցուցին:

Գարամաճեան Սիմոն իր Տարեցոյցը
գործնական և զրական բարեմասնութեամբ
կրկին ճոխացուց: Եւ ուրիշ Տարեցոյցներ
լոյս տեսան, լոյսն անոնց ինծի չհասաւ:

Մանուկ Ճիզմէճեան Պատմաբանը Ա-
մերիկահայ Կոստանդնուպոլիսի իրեւ ճրագ
բազմաբերանեան՝ յեղափոխական սեղա-
նին վրայ հաստատեց:

Կոստան Զարեան ըստ Երգոյն երգոց,
Երեք երգեր երգեց, երգոյն ինքն ալ չը-
հասկցաւ ինչ երգեր երգեց:

Մինասեան Խալուհի տիկին, անարգել
լեզուով իր Vivre գրքով ըստ իր տե-
սութեան՝ անթարգմանելի կեանքին գիրքը
թարգմանեց:

Աթէնքի «Նոր Օր»-ը իրեւ զրազիր Խա-
տիսեանը վարձեց՝ անոր գրել տուաւ Հա-
յաստանի Հանրապետութեան ծագումնա-
պատմութիւնը, ամբողջ հատորներն օրա-
գրին վերնատան մէջ ամբարեց, դուռը
ամուր մը աղխեց:

Յովհ. Աւագեանին կարգացի Այսպէս
սպրեկսը, և համոզուեցայ որ մենք հա-
յերս ոչ զիւցազի, այլ եղբերգութեան
լալկան կեանքը այսպէս այնպէս ապրե-
ցանք:

Աւետիս Ահարոնեան Խմ գիրքը գրեց,
ինքը կարդալու համար. և անով ինքնին
շատագոյն եղաւ իր անհերքելի մեծու-
թեան:

Նախառակ Գրագետներու Բարեկամներ
մահուան երկիւղէն անմահներն ապրեցը-
նելու համար, լոյս տուին լուսաւոր եր-

կերու՛ն Զարդարեանին, Կիւրճեանին, Գեղամին, Արփիարին, և «ի փոքունց աստի երկրայնոց» համարեալ՝ Գեղամ Բարսեղեանին: Հրատարակիչներուն այդ ձեռնարկն է գործ քաջի արանց արեաց:

Հ. Յովսէփեանի հրատարակած Կեանքի Նախօրեակին բարոյական դասերն պատշաճական, ազդողական ամէն հասակի ամէն ճաշակի. խրատները կարեւոր և զօրաւոր, գիտուններուն փոքր ինչ՝ ազէտներուն շատ պիտանի:

Բարգէն Եպիսկոպոսի Հայ Եկեղեցին «յանուն Քրիստոսի ժողովելոց» համար կ'ուզէ ըլլալ հոգեւոր ժողովարան և միջնորդ խաղաղութեան:

Մարի Թուէյնի Իշխան և Մարգարիտ կաղանդի գանձարան, իմաստութեան հետ խառնեալ նրբաճաշակ երգիծանութիւն:

Ապրիլեան եղեւնը կարգացողը կը հարցնէ «գիւրդ սասանեցաւ հաստատեալն»: Մասունիի քննական ակնոցովը զննելու է:

Նիւ Եօրքի Ազատ Մամուլը ճանապարհը ազատ չէ գտած մեզի հասնելու համար: Ան կը խոստանար ամերիկահայ տաղանդաւոր արուեստագէտները մութին մէջէն դուրս հանել: Կը մաղթեմ որ չըլլայ ան աւագափուլ շինուած անկանգնելի:

Մալխասի Ապրումները ինքնապարսաւ կշտամբութեամբ և իմաստութեամբ իմանալի, յուշարձան յեղափոխութեան կը կանգնի:

Ռէն Գեղարհնարուածները, այս անչափելի երկար բառով՝ ամենահամ անհամութեամբ անմեղ զոհերու դատապարտութեան անաւորութիւնը կը չափէ:

Վահան Սօֆեան Քիչ մը երկիր կը բարձրանայ, որքան իր փոքր մեծութեան վայել է:

Փրոֆ. Անանիկեանի Հատընտիրը յոգնահոսան վաստակոց պատուը տակաւին երախտաւոր նուիրատուներու ձեռքը չանցաւ:

Le Feu Assouviի հեղինակը մոռցուած անմոռանալի Պարսամեան Մերու՛ ժան չի յագենար զերդ Փիղիաս երգին գեղեցկութիւնը քանդակելով:

Տիգրան Զաւէն կը խմբագրէ Մեր Ուղիւ որ «ոչ մէկ կուսակցութեան օրդանը չէ», այլ ժամադրաւայրն է Խորհրդային հայրենիքի վարչութեան, անշուշտ... այդ ուղիէն ընթացողը միայն կրնայ հասնիլ «հրաշանուն քաղաք հայրենի»:

Ուսկից ընթացաւ Պօղոսեան, ու մնաց Երկու ամիս Հայաստանի մէջ և գրեց պատմութիւնը նորաստեղծ հայ հայրենիքին, զրիչն անոր անմեղադրելի է, եթէ եղծաւ ու գեղծաւ հայրենասիրի անջնջական կըրակուէ:

Գալփաքճեանի «Վաստակ»ը ներկայ տնտեսական տագնապին կ'ուզէ ըլլալ շանթարգել: Վաստակաւորին չկայ բան մը անհնարաւոր:

Գէորգ Մեսրոպի Հայկարանը կարգացողը չ'ուզէր լսել Խաչատուր Աբովեանի Ողբը Հայրենասիրի: Ինչո՞ւ միշտ կը յարմարեցնէր «ի նիւթս բանից զտառ ողբերգութեան»:

«Պայքար»ի զրական թիւը կարգացողը հայ զրականութեան ականջին կը փափրսայ, «Գու բազումս մեռեալ՝ և մնաս կենդանի»:

Լսեցի որ Ամերիկահայ գիտական միութիւնը ուզած է պարբերաբար շարժիլ բայց ես չտեսայ անոր Շարժումը:

Revue des études arméniennes, որ օտարին առջեւ հայ մտքին փառքն է ու պարծանք. ժամերն անոր կը հաշուելին, հարկ է որ հայ մեկենասներ յարգարեն ճանապարհը անոր. զի առանց մաճակալի արօրը տեղէն չի շարժիր:

Գոկո. Բարսեղեանի «Արփի» կիսամսեան կ'ուզէ ըլլալ ընտանիքի, մտքի, սրտի մշակը. անշուշտ «ըստ տարագուսերման» և հնձելն է իրաւացի»:


Սոս - Վանի Անահատիւն պերճ պատմութեանը կը հագցնէ հայկական առասպելին:

Հայ միտքը շատ հունձը չունի որ պարծի, որ խրոխտայ, որ պանծայ. թէեւ երբեմն պապանձեալ կը մեծաբանէ, ձաղկեալ՝ կ'ըմբոստանայ: Երանի՛ եղկելինեւրուն որ ինքզինքնին երջանիկ կը համարուին:

ըին: Քննադատութեան պակասովը կ'արգարանայ ապիկար հրատարակութեանց սանձարձակութիւնը. «Զի ո՛չ երբեք հարթ ընթանայ երիվար՝ առանց սանձակալի»: Խակակութէն՝ խակութիւն կը սպասուի, ո՛չ թէ հասուն զրականութիւն: Ան.

PADOVA, Via Dimesse 1.

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ



Յ Ո Յ Ս Ե Ր Ս Է Ր

Պէտք է գիշերել այս երգիքին տակ, Հոգ չէ թէ հին է ու մեղքով լեցուն. Պաղ քարերուն իսկ՝ կամքին հակառակ՝ Պարտի համբոյր տալ հէք մահկանացուն:

Ո՛չ որ կը զբաղի վաղուան արկածով, Խեղճը խեղճ է հոս, մինչ հարուստն՝ արքայ, Ու իրենց համար երկինք, հող ու ծով Չունին ոչ հրմայք, ոչ վայելք ու շահ:

Խորանին վըրայ խա՛չն է մենաւոր, Ու եկեղեցին կը նիրհէ կարծես, Անըզգայ մարդիկ, նիւթով բեռնաւոր, Մոոցե՛ր են աւաղ քահանայ ու ծէս...:

Բայց տըրտմութիւն կայ նայուածքներու մէջ, Եւ հեքոտ կուրծքեր հանգիստ կ'որոնեն, Ամբիժ հոգիներ յոգնած են ու շէջ, Ու կեանքն է կ'անցնի այսպէս յամբօրէն:

Մայթերուն վըրայ մեծ պողոտային Վըշտի ծաղիկն է արմատ արձակած. Եւ շարժումներ կան՝ յայրատ, դիւային, Որ հաճոյքի մէջ մահ են անկասկած:

Կը քալեմ մինակ, ու կը տանջէ զիս Երկրի տըքնութիւնն աննըւած թափով, Հոգւոյս պարտէզին գեփիւռ ու նարգիս Չեն բերեր նախկին համբո՛յրն հոգեթով:

Երկաթալ թողուցի զրքերը որոնց զրականութիւնն է խառնակութիւն ներհակական, մեծութիւնը՝ կուռք կաւեղէն, համբաւը պատահական, ապրումը՝ առօրեայ, հմտութիւնը՝ շտեմարան ոչնչին:

Մեկնի՛լ թէ մընալ, իրա՛ւ չեմ գիտեր, Պահեր կան՝ որ զիս կը մըրըկեն ուժգին. Խոհերով լեցուն, մինակ ու անտէր Կը քալեմ՝ ճամբէն մեծ անձանթին:

Անդու՛ սըլացքով այս Երկընքին տակ Շէք թըշուառութիւնն հասակ կը նետէ, Եւ քամբախտ մարդիկ՝ կեանքին անգիտակ՝ Հաճոյք կը փնտռեն մութ նկուղներէ:

Ու կը մտածեմ. սա՛ հորիզոնէն Պիտի բարձրանա՛յ արեգակ մը նոր, Որ տայ յոյսին կեանք, շընջէ ուժգնօրէն ճակատներու վրայ սեւ գիծն ահաւոր...:

Մերթ կը հաւատամ ու մերթ ակամայ Կ'ըլլամ յոռետես և կու լամ ուժգին. Ո՛չ մէկ անուշ սէր սըրտիս կը թըրթռայ Ոչ մէկ մեղեդի կ'օրրէ իմ հոգին:

Սիրե՛լ թէ առիւ. չեմ գիտեր նորէն, Անլուր ցաւեր կան՝ որ սահման չունին, Ու սըրտիս վըրայ՝ գոնէ մեղմօրէն՝ Չեն ցօղեր յոյսի նըշոյլ մ'երկնային:

... Ու գիշերուան մէջ կը լողանջեն դեմ՝ Կոչնակներն հըսկայ մըտքիս տաճարին, Ու փողոցներէն մինակ ու անտէր, Կ'անցնիմ հեւ ի հեւ, թախիծներով հին:

ՀՐԱՉ ՔԱԶԱՐԵՆՑ